

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross
Armenian Church

8 Մայիս 1979

Ապրիլի 21, 1979

Հոգեշնորհ
Տէր Վազգէն Ժ. Վրդ. Քէշիշեան
Առաջնորդական Փոխանորդ
Գանատայի Հայոց
Թորոնթո.

Հայր Սուրբ,

Ժիական Խորհուրդիս Ամենապետ Տօրթ. Վարդան Այնճեանի ուղղեալ Ձեր
27 Ապրիլ 1979 թուակիր նամակը ստացանք:

Ներկալ Ձեզ կը յանձնենք Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ անունով
պատկան իշխանութեանց մօտ կատարուած դիմումնագիրները եւ ստացուած
վաւերագիրները: Ասոնցմէի ինքօրրօրէշի վաւերաթուղթը արդէն 10 Յուն-
ւար 1979 թուականին, Ձեր ալ ներկայութեան, պաշտօնական ժողովի մը ըն-
թացքին, Արեւելեան Թեմի Առաջնորդ Սրբաշնին փափարին համաձայն իրեն
տրուած էր, այն հասկացողութեամբ, որ Առաջնորդ Սրբազանը թիմական Խոր-
հուրդի Ամենապետ Դատաւոր Ժան Նաժարեանի հետ խորհրդակցաբար, այս ին-
քօրրօրէշը թեմէն ներս առնելու կարելիութիւնները պիտի սուտումնասիրէր:
Ինչպէս Ձեզ յայտնի է, ըստ Վեհափառ Հայրապետի հրահանգին 16 Ապրիլէ
ի վեր առ ժամաբար դադրեցուցած ենք Ս. Պատարագները եւ ծիսակատարութիւն-
ները, որպէսզի նոյն հրահանգին համաձայն Դուք որպէս Առաջնորդական փո-
խանորդ Գանատայի Հայոց, նշանակէք հոգեւորական մը վերսկսելու համար
Ս. Պատարագներու եւ կատարելու ծիսակատարութիւններ, որոնց դիմումները
արդէն իսկ ստացած ենք:

Այսու կ, ուղևնր Ձեր ուշադրութեան յանձնել, թէ՛ հակառակ Վեհափառ
Հայրապետի որոշումին եւ Ձեզի տրուած յստակ հրահանգին, որ, մը 17 Ապրիլ
1979ին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ մօտաւորապէս 120
ազգայիններու ներկայութեան Ձեր կողմէ կարդացուեցան, տակաւին Ս. Երրոր-
դութիւն Եկեղեցւոյ ծիսական Խորհուրդի մաս մը անդամներ ու իրենց կարգ
մը ըսկերները, թէ՛ Եկեղեցւոյ մէջ եւ թէ՛ տուն տուն հեռաձայնելով Ս. Խաչ
Հայաստանեայց Եկեղեցին թեմական իշխանութեան շենթարկելու, Գանատական
Անջատ Թեմի հաստատումը յետաձգելու եւ Արիս Սրբազանը քաղաքէս հեռացր-
նելու ընդթով գրուած խնդրագրի մը ստորագրութիւն կը շանան հաւաքել:

Վեհափառ Հայրապետի իղծ եւ հրահանգներուն դէմ կազմակերպուած ըլլա-
լով սկսուած այս շարժումը, հանդարտելու փուլին մէջ մտնող գաղութս
կրնայ շատ աւելի տազնապալից իրողութեան մը առջեւ բերել:

Վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ, գտահելով Ձեր լայնախոհութեան
եւ իմաստութեան, ինչպէս Վեհափառ Հայրապետն ալ իր հեռագրին մէջ գրած է
Ձեզմէ անգամ մը եւս կը խնդրենք որ ամէի շապէս հոգեւորական մը նշանա-
կէք, որպէսզի բնականոն ընթացքը վերահաստատուի ու առիթ չընծայուի
անոնց, որոնք Հայրապետական իղծ եւ հրահանգներու շակասով, գաղութիս
գոյգ եկեղեցիներուն ապագայ համագործակցութիւնը այսօրունէ կացինահա-
րել կ'աշխատին:

Ստորեւ կը ներկայացնենք ծիսական Խորհուրդիս այժմու անձնակազմը:
Փափաքելի է, որ Արեւելեան Թեմի կանոնադրէն երկվեցեակ մը մնաի
տրամադրէք:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆՅՑ
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross
Armenian Church

Մենք՝ Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդս եւ մեր համայնքը պատրաստ է Ձեր շուրջ հաւաքուելու եւ համագործակցելու ի շահ մեր գաղութի համերաշխութեան եւ ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ: Սպասելով Ձեր անմիջական շինարար տնօրինութեան, յարգանքով

Ռ. Դիմաց
Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի

Յակոբ Նար

Սոքր. Ա. Վ. Այնանեան

Յակոբ Նար
Ատենադպիր

Սոքր. Ա. Վ. Այնանեան
Ատենապետ

Սոքր.	Վարդան	Այնանեան	Ատենապետ
Տիար	Արմէն	Քիւրքճեան	Փոխ Ատենապետ
Տիար	Յակոբ	Նար	Ատենադպիր
Սոքր.	Վահէ	Սվանեան	Փոխ Ատենադպիր
Տիար	Ղեւոնդ	Շահմելիքեան	Գանձապահ
Տիար	Անդրանիկ	Զազարեան	Փոխ Գանձապահ
Տիար	Սոլերէն	Էկրան	Խորհրդական
Տիար	Եղիա	Թորոսեան	
Տիար	Մարտիկ	Հէքիմեան	
Տիար	Գրիգոր	Մազմանեան	
Տիար	Լեւոն	Չէօմէրճեան	
Սոքր.	Վաչէ	Քերամեթիեան	
Տիար	Յակոբ	Քէլէշեան	
Տիար	Ժան	Ֆէնէրճեան	



Ներքակ՝

1. Application for registration
2. Notification of registration
3. Letters Patent
4. Holy Cross Armenian Church By-Law No. I